

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՍԵՐՈՎԻԷ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՐԳԵՒՄՏՐՈՒՂԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿՈՌԱՎՄՈՐՈՒԹԵՆԷՆ
«ԼԷՏԻՅՆ ՏՕՆԷՅՈՐ»Ի ԱՍՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՇՔԱՆՇԱՆՈՎ

«*Ես ի դնահատութիւն իր երկար տարիներու ծառայութեան, զոր
ինք բերած է Ֆրանսահայ զաղութին կազմակերպման աշխատանքին
և Հայ ու Ֆրանսացի ժողովուրդներու ըստեկամութեան ամրա-
պնդման:*»

Շքանշանի յանձնման հանդիսութիւնը տեղի ունեցած է Ե-
րեջարթի, 24 Մայիս 1983, Փարիզի Սիրլըլ սէ Լիւնետն Էնթէր-
ալիէ սրահին մէջ:

Սոյն հանդիսութեան ներկայ եղած են Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ֆրանսայի Ներքին
Գործոց Նախարար Կասթօն աը Ֆէր, Ֆրանսայի քաղաքական կու-
սակցութեանց ներկայացուցիչներ և աւելի քան 500 Ֆրանսացի և
Հայ հրաւիրեալներ:

Այս ուրախ առիթով, Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարք
Տ. Եղիշէ Արքեպօ. Տէրտէրեան և համայն Ս. Յակոբեանց Մխարա-
նութիւնը իրենց սրտագին շնորհաւորանքը ունին իրենց աւագ Միա-
բանակից եղբօր՝ Գերշ. Տ. Սերովիէ Արքեպօ. Մանուկեանի և ի-
րենց հոգևին խնդակցութեան մէջ իրեն կը մաղթեն երկար և առողջ
տարիներ և արդիւնաշատ զործունէութիւն: